

ԱՐՓՈՓՈՒՄՆ ԳՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՎԱՍՆ ԿԱՅՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹԵԱՆ *):

Այս տարի Մայիսի 7-ին, Էջմիածնի մէջ պէտքէ կատարուի Մայրագոյն Պատրիարքի և Կաթուղիկոսի ամենայն Հայոց ընտրութիւնը ի տեղի Սրբազնագոյն Գէորգ Կաթուղիկոսի, որը վախճանեցաւ 1882 թ. Դեկտեմբերի 6-ին:

Համաձայն Բարձրագոյն հաստատեալ 11 Մարտի 1836 թ. կանոնադրութեան, վասն Կառավարութեան Հայ - Լուսաւորչական եկեղեցւոյ Ռուսաստանում (§§ 13—17), Էջմիածնի Կաթուղիկոսի ընտրութեանը մասնակցումեն քուէրկութեամբ Էջմիածնի Սինոդի բոլոր անդամները, Էջմիածնի ներկայ գտնվող միաբաններից եօթը աւագագոյն եպիսկոպոսներ կամ վարդապետներ և երկու երկու պատգամաւորներ հոգմեորական և աշխարհական իւրաքանչիւր թէ Ռուսաստանի և թէ արտասահմանի թեմերից։ Հոգեւոր պատգամաւորը պէտքէ լինի կամ ինքը թեմական առաջնորդը կամ նորանից այդ նպատակով նշանակուած այն թեմի հոգեւորականներից մի անձը։ աշխարհական պատգամաւորը իւրաքանչիւր թեմի կողմից ընտրվումէ Հայ - Լուսաւորչական եկեղեցւոյ պատուաւոր անդամներից, որոնք, ըստ նախնի աւանդութեան եկեղեցւոյ, ունին այդ իրաւունքը։ Պատգամաւորներից ով որ չկարողանայ նշանակած ժամանակին անձամբ ներկայանալ Էջմիածնին, իրաւունք ունի յայտնել Էջմիածնի Սինոդին իւր միտքը գրաւոր կերպիւ։

1829 թուից սկսեալ, այն է Էջմիածնը Ռուսաց Կայսեր իշխանութեան ներքոյ մտնելուց յետոյ, Էջմիածնի Աթոռակալի չորս անգամ եղած ընտրութեանց ժամանակին վերոյիշեալ կարգը պատգամաւորներ ուղարկելու մասին կատարվումէր միայն Ռուսաստանի և Պարսկաստանի թեմերի կողմից։ Տաճկաստանի Հայերը, քաղաքական հանգամանքների պատճառով, ամենելին չեն

*) Ստացուեց սոյն գրութիւնը ի հրատարակութիւն, ի յաւելուած Ապրիլ ամսոյ Սրարատայ։

մասնակցել առաջին երկու ընտրութեանցը և մինչեւ անգամ այդ միջոցին երբեմն չէին ընդունում Էջմիածնի Կաթուղիկոսների ընդհանրականութիւնը: Սոցա կապը Էջմիածնի հետ նորոգուեց միայն քառասուն թուականներից Ներսէս Կաթուղիկոսի ընտրութիւնից յետոյ: Նոքա թէ և մասնակցումէին հետեւեալ երկու Կաթուղիկոսական ընտրութիւններին, բայց ոչ ըստ ամենայնի այն ձևով որ պահանջումէր վերոյիշեալ 1836 թ. կանոնադրութիւնը: Այսպէս, 1858 թ. Կոստանդինուպօլսի ազգային ժողովը նշանակեց Ռուսաստանում ընակուող երկու ռուսահպատակ աշխարհական անձինք, որ Կաթուղիկոսական ընտրութեան ժամանակին Տաճկաստանի 45 թեմի կողմից ձայն տան այն Կաթուղիկոսացուներից մէկի համար, որոնց մասնացոյց էր արած ազգային ժողովը: Վերջին Կաթուղիկոսական ընտրութեան միջոցին 1866 թ. նոյն Կոստանդինուպօլսի ժողովը ուղարկեց Էջմիածնի բոլոր լուսաւորչական Տաճկահայերի թեմերի կողմից նոյնապէս միայն երկու պատգամաւոր, հոգեորակական և աշխարհական, որոնց իրաւունք էր տուած ձայն տալ ըստ թւոյ այդ թեմերի այն Կաթուղիկոսացուի համար, որը ստացել էր ձայների մեծամասնութիւն յիշեալ ժողովում: Յետոյ Կաթուղիկոսական ընտրութեան ժամանակ Էջմիածնում այդ պատգամաւորները յայտնեցին, որ իրաւունք ունին 130 ձայն տալու, ըստ թւոյ իբր տաճկաստանում գտնվող 65 թեմերի, բայց 1858 թ. օրինակին հետեւլով Էջմիածնի Սինոդը ընդունեց նրանց կողմից միայն 90 ձայն համեմատ 45 թեմերին:

Թէ 1858 թ. և թէ 1866 թ. ի 11 Մարտի 1836 թ. կանոնադրութեամբ սահմանած ընտրութեան կարգից շեղումն արտայայտվեց գլխաւորապէս նրանում, որ այդ ընտրութիւնները կատարվեցան իսկապէս ոչ թէ Էջմիածնի սրբոյն Գրիգորի Լուսաւորչի վանքում, այլ Կօնստանտինապօլսում և ոչ թէ բոլոր Հայոց ազգաբնակութեան պատգամաւորների կողմից, որոնք պէտքէ այդ նպատակաւ ընտրվէին անմիջապէս իւրաքանչիւր թեմից, որպէս պահանջումէ 1836 թ. կանոնադրութեամբ վերահաստատեալ Հայաստանեայց եկեղեցւոյ նախնի աւանդութիւնը, այլ Կօնստանտինապօլսում Հայոց ազգային ժողովի կողմից:

Էջմիածնի Կաթուղիկոսի առաջիկայ ընտրութեան ժամանակին, որ պէտքէ այժմ կատարվի, կարեւոր է համարուած հետեւել այն

կորպին, որը սահմանվածէ 1836թ. կանոնադրութեամբ առանց
մի որ և է շեղման։ Այս պատճառաւ ընտրութեան ժամանակին
ձայն տալու իրաւունք կունենան բացի էջմիածնի Սինօդի անդամ-
ներից, էջմիածնի վանքի եօթը եպիսկոպոսներից և վարդապետնե-
րից, միայն այն պատգամաւորները՝ որոնք ընտրված կլինեն յատ-
կապէս դորա համար իւրաքանչիւր Հայ Կուսաւորչական թեմի կող-
մից։ Եթէ առաջիկայ ընտրութեան ժամանակ կրկին ներկայա-
նան, իբրև Տաճկառանի բոլոր թեմերի պատգամաւորներ, միայն
Կօնստանտինապոլսի Հայոց ժողովից ընտրված երկու անձննք,
դոքա կհամարվին իբրև Կօնստանտինոպոլսի թեմի ներկայացու-
ցիչք, մի միայն երկու ընտրողական ձայն տալու իրաւունքով։
Կօնստանտինոպոլսի Բարձր Սրբազն Ներսէս Պատրիարքը արդէն
ստացել է հարկաւոր բացատրութիւններ այս մոքով թէ էջմիածնի
Սինօդից և թէ մեր Կ. Պոլսի գեսպանատանից։

Այսուհետեւ ձայն տալու իրաւունքը կպատկանի Կաթողիկո-
սական ընտրութեան համար յատկապէս ընտրված միայն այն
պատգամաւորներին, որոնց առաջնորդներին ուղարկած են իւրա-
քանչիւրին առանձնապէս էջմիածնի Սինօդի հրաւիրագիրը, հան-
գերձ Կաթողիկոսական ընտրութեան կարգի մանրամասն բացա-
տրութիւններով, համաձայն 1836թ. կանոնադրութեան։ Այդ
թեմերը հետեւեալներն են՝ Առաստանական 1, Նոր Նախիջևանի
և Բեսարաբիայի, 2, Հաշտարիսանի, 3, Երևանի. 4, Վրաստանի
և Խմերեթի, 5, Կարաբաղի 6, Շիրվանի, և 7, Կարսի. Պարսկա-
ստանական 1, Ատրպատականի և 2, Խապահանի և Հնդկաստանի.
Տաճկառանական 1, Կօնստանտինուպոլիսի, 2, Երուսաղէմի, 3, Աղ-
թամարի, 4, Թէքէրդաղի, 5, Աղրիանոսոլիսի, 6, Վարնայի, 7,
Մոլդովականի, 8, Տրավիզոնի, 9, Ջանիկի, 10, Շաբան - Ղա-
րահիսարի, 11 Թամգար Այգատերի, 12, Ամասիայի և Մարզվանի,
13, Եւղոկիայի (Թոխաթի), 14, Սեբաստիայի (Սըվաղի), 15,
Կարինի (Էրզրումի), 16, Վանի, 17, Լիմա և Կտուցի, 18,
Բասենի (Հասան - Կալի), 19, Բայազէդի, 20, Մուշի, 21, Քղի (Սընդղի)
22, Բաղէշի (Բիթլիսի), 23, Դերջանի, 24, Բաբերդի
(Բայբուրդի) 25, Երզնկայի, 26, Զնկուշի, 27, Բալուի, 28,
Զարսանջախի, 29, Խարբերդի, 30, Խուզեվանքի, և Զմշկածակի,
31, Սրապիերի, 32, Ակնի, 33, Կեմախի, 34, Արդնի, 35, Կեսա-

րիայի, 36, Տիգրանակերտի (Դեարքակերի), 37, Քուրդիստանի, 38, Եղեսիայի, 39, Բաղդադի, 40, Ղալաթի (Էնկիւրի), 41, Իզմիրի (Զմիւռնիա) 42, Եգիպտոսի և Կրիտի, 43, Պանդրմանի, 44, Կուտինայի, 45, Բրուսիայի, 46, Նիկոմիդիայի:

Էջմիածնի Սինօդի հրաւիրագիրը վերոյիշեալ այն թեմերի առաջնորդների անուամբ, որոնք գտնվումեն Օսմանեան տէրութեան մէջ, կօնստանդինօպոլսի Կայսերական գեսպանատունը յանձնել է Բարձրաստիճան Ներսէս Պատրիարքին, ըստ պատկանելոյն հասուցանելու համար: